ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION
AND INFRASTRUCTURES OF RA

«ԵՐԵՎԱՆԻ ՋԷԿ» ՓԲԸ

"YEREVAN TPC" CJSC

ՀՀ, ք. Երևան 0053, Արին-Բերդի փ. 3-րդ նրբ., 3

RA, 0053 Yerevan, Arin-Berdi st. 3rd Lane, 3

www.ytpc.am +374 11 472 760 | +374 11 472 771 mailbox@ytpc.am

N° ԱԲ/170-2024

22 03 2024թ./y.

«Ալեքս Պրո» ՍՊԸ-ի տնօրեն
Լ. Ալեքսանյանին
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Ռոստովյան 36/33
ՀՎՀՀ՝ 00483033
Էլ. հասցե՝ Alexprollc1@gmail.com

Հարգելի՛ տիկին Ալեքսանյան

ՀՀ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի միջև (այսուհետ՝ Վաճառող) 17.04.2023 թվականին կնքվել է N «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/7-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված խողովակներ ABB Navigator 600 silica, Navigator 600 silica-յի համար նախատեսված տարեկան սպասարկման համար AW601176 ապրանքի մատակարարումը:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.4.2 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.4.4 կետի համաձայն Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Հիմք ընդունելով, այն փաստը, որ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ն խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները համաձայն Պայմանագրի 2.4.1, 2.4.2 և 2.4.4 կետերի, ուստի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/7-2» ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ «Ալեքս Պրո» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք «ԵՋԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/7-2» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ փոխանցել ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ 2473600002170010 հաշվեհամարին և այդ մասին գրավոր տեղեկացնել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ -ին՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի հաշվեհամարին, ապա ձեր Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

/Ա. Բաղդասարյան

Կատարող՝ Մատակարարման և Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ն. Փարսադանյան
Հեռ. 096 74 67 23
Կատարող՝ Իրավաբանական բաժնի պետ՝ Ա. Զաքարյան